

«ԵՐԲ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԼԻՆՈՒՄ Է ԱՅՆՈՅ ԶԵՂՔԻՆ»

Posted on December 26, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Ռուբեն Յովակիմեան, Ֆրանսա, 20 Դեկտեմբեր 2020**«Եթե երիտասարդները գիտենային եւ ծերերը կարողանային-հրաշքներ կը լինեին»**

Վիկտոր Հիլզո

Իմաստուն էր երջանկայիշատակ Պարոյր Սեւակը եւ նա չափազանց զգայուն եւ խորամիտ էր, երբ գրում էր . «Մարդ կայ աշխարհն է շալակած տանում... մարդ կայ ելել է շալակն աշխարհի»: Գաղտնիք չէ, որ մարդկային հասարակութիւնը՝ ի սկզբանէ, նաեւ կենդանական աշխարհը, շերտաւոր են. կան տիրողներ եւ ենթականեր եւ այդ վիճակը շարունակուում է մինչ այսօր զանազան անունների տակ: Արդի ամբողջ աշխարհը դեկավարում է մի խումբ ուժեղ եւ խոշոր դրամատերերը՝ գործակցելով գաղտնի կամ ստուերային կազմակերպութիւնների հետ, որոնք տեղեակ են, թէ երբ եւ որտեղ ի՞նչ տեսակի բախումներ են նախատեսուած եւ ի՞նչ ակարտ պիտի ունենան, եւ բացառուած չէ, որ Արցախեան մարտերի դժբախտ ակարտը քննուած եւ իր լուծումն է գտած այդ մակարդակին, որին կարող է հիմք ծառայել այն հանգամանքը, որ երբ մերոնք ռմբակոծեցին Գանձակը իր օդանաւակայանով եւ ոչ հեռու էր նաեւ դէպի Ջեյհան տանող գազատարը, որ ունի ռազմավարական կարեւոր արժէք եւ նշանակութիւն՝ մնաց անխոցելի: Ինչո՞ւ: Ենթադրաբար, այդ [գազատարի](#) փայատերերն են, որ նոյն խոշոր դրամատերերն են, վերից զգուշացրին՝ ո՞ւմ եւ ի՞նչ ճանապարհով՝ մեզ անհասանելի է :

Առեղծուածային եւ անիծեալ խնդիր է «հայկական հարցը», ինչ մակարդակի եւ ինչ ծաւալի էլ այն լինի: Թղթ շերտի դրուագից ի վեր, երբ այդ խնդրի լուծումը լինում է այլոց ձեռքին, միշտ մեզ համար աննպաստ ակարտ է ունենում: Միայն մէկ անգամ ԱՄՆ նախագահ Վուդրօ Վիլսոնն էր, որ մեր օգտին որոշում ընդունեց, բայց, ակա՞ն, մահացաւ՝ եւ ոմանք կարծում են, թէ պատահական չէր դէպքը: Նոյն ակարտը ունեցան բոլոր այն համաժողովները, ուր քննում էին մեր հարցը, եւ որպէս հետեւանք ունեցանք մեր պապենական տարածքների միայն տաս տոկոսը, որ դարձեալ վտանգի տակ է, եթէ ներքին պառակտումները հասնեն այն ուժգնութեան, որ դէպի անդունդ գահավիժենք, ինչ որ անհնար չէ՝ տեսնելով մեր քաղաքական ուժերի՝ իրար յօշոտելու ախորժակը: Անկախութիւնը մեր երկրին բարիք եւ քաղաքական հասունութիւն չբերաւ, քանզի նախընտրում ենք պառակտութիւնը՝ օտարին ենթակայ լինելու սկզբունքով եւ դա ոմանց ձեռնտու է, մանաւանդ աշխարհի տիրակալներին, որոնց մաս են կազմում նաեւ թուրքերը, որ պատրաստ են մեզ կուլ տալ եւ չմոռանանք, որ Էրդողանը ծրագրած է վերականգնել խալիֆի աստիճանը 1924-ին, եթէ կարողանայ շահել գալիք ընտրութիւնը :

Այդ ջոջերը միշտ արթուն են եւ տեղեակ, թէ ո՛ւր՝ ի՞նչ է կատարում: Նրանց գործակալները ամենուր են, նոյնիսկ մեր երկրում, որ քարտեզի վրայ ընդամենը մի կետ է

տոանց անուանը նշուելու, ո՛րք կառուցուել է աշխարհի ամենամեծ ԱՄՆ

դեսպանատներից մեկը: Գաղտնի՞ք է, արդեօք, որ տարբեր բարեգործութեան եւ նոր ազատական (néolibéralisme) անուան տակ մեր երկրում են հաստատուել տարբեր տեսակի ու չափի կրոնական աղանդներ, մասոններ, սորոսականներ, նաեւ թերեւս թաքնուած այլ դեսպանատան ծառայողներ, որոնց միակ նպատակն է խաթարել մեր աւանդականը եւ ներմուծել իրենցը. նրանք ամեն ինչ անում են, որ Տիբեթից մինչեւ Ամազոն բոլորը միանման լինեն իրենց կենցաղով, մշակոյթով, մտածելակերպով ու բարքերով եւ սպառել վերից առաջարկուած արտադրանքը, նոյնիսկ առօրեայ հագուստների վրայ լատինատառ անիմաստ որեւէ բառով, որ մարդկանց դարձնում է մտքից տկար, հոգով բոբիկ կամ ժամանակակից ստրուկ: Այդ ներմուծումը լինում է որոշ նուիրատուութիւններով՝ փոքր երկրներում, գովազդի խլացուցիչ աղմուկով կէս զարգացածների համար, մոդայի պիտակի տակ աւելի զարգացածների մօտ:

Եթէ համարենք, որ այդ մտայնութիւնն ու նպատակը այլ բան չէ, քան համաշխարհայնացման (globalisation) ծրագիր, ապա մոռացման վտանգի ենթակայ են իրենց բոլոր բաղադրիչներով՝ վեհապետութիւնը, արդիւնաբերութիւնը, աւանդական մշակոյթները՝ արուեստն ու արհեստները, տնտեսութիւնը, ապրելակերպը, կրթութիւնը, գեղեցիկի ընկալումը, «բիզնեսը», ազգային գաղափարախօսութիւնը եւ այլն: Պատահակա՞ն է, որ Եւրոմիութեան ստեղծումից յետոյ, գործազուրկների թիւը հսկայական աճ արձանագրեց մի շարք երկրներում, քանզի գործարարները տեղափոխում էին իրենց արտադրանքը աւելի էժան բանուորական ուժ առաջարկող երկրներ, դասական արուեստի մատուցումը տեղը զիջեց արդիականին, մանաւանդ աչքի է զարկում մեծ ու փոքր ժողովուրդների համատարած համազգեստի նման զգեստաւորումը: Աշխարհի մի ծայրից միւսը, մինչեւ իսկ Արցախի կորստած գիւղերում, այր թէ կին, ահել թէ ջահել, գեր թէ նիհար բարձր թէ կարճահասակ, գէշ թէ գեղեցիկ, բոլորը մինչեւ իսկ մանկիկները, կրում են Ամերիկայից ներմուծած ջինս կոչուած տաբատը՝ *սաբոյի* հետ համատեղ: Դեռ աւելին՝ տաբատները յաճախ լինում են պատռուած՝ որքան կարելի է շատ բացուածքներով, եւ դա համարում է արդի գեղեցկութիւն՝ նորոյթ (մոդա): Ահա թէ ուր է գեղեցիկի զգացումի ապականումը, որ ոմանք կոչում են «նեոլիբերալիզմ»:

Թող ներեն այս նշուածներին նմանուող ընթերցողները, ես փոփոխութիւնների ու նորարարութիւնների հակառակ չեմ, բայց ամեն բանի սահմանը ճանաչելը իմաստութիւն է:

Թերեւս, այլեւս պիտի չտեսնենք հեզաճկուն տիկիներին իրենց բարեմասնութիւններով եւ ամեն մեկը իր սազական հագուստով՝ բարձրակրունկ կօշիկով ճեմել մայրերի վրայ՝ գայթակղելով անցորդներին:

Յիշեցնեմ նաեւ իմ յարգելի ընթերցողին, այս գրառումով կենսական խնդիրներ չեն, որ կ'ուզեմ ներկայացնել, բայց նրանք մեր կեանքի մասն են կազմում ամեն օր եւ ամենուրեք՝

Եւ ունեն իրենց կարեւորութեան աստիճանը եւ զբաղեցնում են ազգային
գաղափարախօսութեան մի մասը:

**Այդ գազատարի հիմնական բաժնետէր են՝ Անգլիա, Թուրքիա, ԱՄՆ, Իսրայէլ,
Ադրբեջան եւ այլն:**

There are no comments yet.